

- 26 Տես դու աստանօր ըզխընամ Վերնոյն,
Թէ զ՞ ամբքէր ըզվիշտ մատնելոյն,
Ներհակեալ յաւէտ դիպուածոյ նաւուն
Որ ածելոց էր զայն յամրոց մահուն:
- 27 Ահա անձըն որ խոստովան առնի
Առ Տէր Աստուած իւր միշտ յամենայնի.
Թէպէտ եւ մատնի ի ճանկ գազանի,
Այլ ըստ տընանկի չերբէք մոռանի:
- 28 Իսկ յայս միջոցի Սարգսի սիրելիք
Ազնիւ ամիրայք է՝ այլ անձինք բարիք
Որք ի Բիւզանդի^օա էին անուանիք
Թիկունք լինէին նրմա ջանիւ լիք:
- 29 Որք ընդ Յակոբու խօսէին յաճախ
Համոզեալ ըզնա փրկիկն անյապաղ
Յաքսորանաց՝ զայն որ էր այր խաղաղ,
Եւ որ չէր արժան հեծել ի մետաղ:
- 30 Եւս անգամ անգամ երթայր առ Յակոբ
Սարգսի ծեր խօթ մայր իբր ոսկերց կողովի,
Զորոյ նա խիստ սիրտ ակօսէր զերթ խոփ,
Երբ լալով խընդրէր զորդին իւր կոճոպ:
- 31 Ընդ որ եւ երկու գըստերք իւր համեստ,
Վաղ իսկ արամբիք քաջ վարուց պահեստ,
Միշտ ողբ բանիւ եւ ոչ լեզուաւ հեստ,
Զամուրս կակղելոյ գիտէին զարհեստ:
- 32 Յաւուրան յայնոսիկ թուղթ գըրէր Դըրան
Զափուշն յուսահատ պատմել զանցս համայն
Ուստի ըսպասէր նոր պատուէր ինքեան,
Զի ոչ կատարիւր նախկին հըրաման: